

Կ-1162-04.02.2017-ՏՀ-010/2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-270 օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 18-րդ Հոդվածի հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե ռոյալթիի հաշվետու ժամանակաշրջանը ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ռոյալթիի իրացման շրջանառությունը 20 տոկոս կամ ավելի չափով ցածր է նույն ամսվա ընթացքում մատակարարված խտանյութում՝ մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային գների հիման վրա հաշվարկված իրացման շրջանառությունից, ապա՝ այդ ամսվա համար իրացման շրջանառություն է համարվում մատակարարված խտանյութում պարունակվող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային միջին գների 80 տոկոսի արտադրյալը»:

**Հոդված 2.** Օրենքի՝ 18-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն օրենքի կիրառության իմաստով՝ մետաղի միջազգային միջին գին է համարվում ֆինանսների բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր

մարմնի կողմից Լոնդոնի մետաղների բորսայի, իսկ նշված աղբյուրի կողմից որևէ մետաղի վերաբերյալ տվյալներ չհրապարակվելու դեպքում՝ համանման միջազգային այլ հեղինակավոր աղբյուրի տվյալների հիման վրա յուրաքանչյուր ամսվա համար հրապարակված գինը (հրապարակելով նաև՝ աղբյուրի վերաբերյալ տեղեկությունները)»:

**Հոդված 3.** Վճար վճարողներն ազատվում են Օրենքի 18 հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությամբ սահմանված կարգով հասույթի վերահաշվարկման արդյունքում՝ մինչև 2016 թվականը ներառյալ ընդգրկող հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերվող ռոյալթիների գծով հաշվարկված տույժերից և տուգանքներից:

**Հոդված 4.** Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ մինչև 2016 թվականը ներառյալ հաշվետու ժամանակաշրջանների հասույթի վերահաշվարկման արդյունքում առաջացած պարտավորությունները կարող են մարվել դրանց աստիճանական մարման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի համաձայն կազմված՝ հարկային մարմնի ղեկավարի և վճար վճարողի միջև համաձայնեցված ժամանակացույցով:

**Հոդված 5.** Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների կիրառությունը տարածվում է 2017 թվականի հաշվետու տարվա ռոյալթիների հաշվարկման հարաբերությունների վրա:

## Ամփոփաթերթ

**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» և  
«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի  
վերաբերյալ ներկայացված առաջարկությունների**

| Հ/Հ | Առաջարկության հեղինակը                                               | Առաջարկության բովանդակությունը                                                                                                                                                                                                    | Եզրակացություն                                                                                                                                                                         |
|-----|----------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1.  | ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյան | «ՀՀ հարկային օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող՝ մետաղական խտանյութերում վճարվող մետաղների կազմը սահմանել օրենքով                                                           | Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածի «ա1» կետով սահմանվում է մետաղական խտանյութերի յուրաքանչյուր տեսակի համար վճարվող մետաղների կազմը: Համապատասխանաբար լրամշակվել է նախագծի 2-րդ հոդվածը |
| 2.  | ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյան | «ՀՀ հարկային օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում սահմանել մետաղական խտանյութերի վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի սահմանաչափերի որոշման համար ուղենիշ հանդիսացող աղբյուրները | Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածի «ա2» կետով սահմանվում են մետաղական խտանյութերի վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի սահմանաչափերի որոշման համար օգտագործվող աղբյուրները       |